

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2015 թվականի առաջին եռամսյակում կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2015 թվականի առաջին եռամսյակում, համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշմամբ Արենի, Գետափի, Արփի, Ազատելի, և Ռինդի համայնքներում՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից բարձրարժեքի:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 34 առաջարկություններ, որից 7-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխվել վերաբերյալ, որոնք ել սահմանված կարգով փոխանցել ենք համայնքի ղեկավարներին:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի՝ համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 3 համայնքներում, հայտնաբերված թերությունների վերացման համար հստակ ժամկետ է տրվել:

Հետևողական ենք եղել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվեն՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ենք ներկայացրել Գնդեվազ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 14.02 հա տարածքի գյուղատնտեսական

գործնեություն ծավալելու նպատակով օտարելու, որի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

Չամայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ 1-ը ապրիլի 2015թ օտարվել է 10.578 հա, 2482920 դրամ.գումարով, վարձակալության է տրամադրվել 4.688հա կնքվել են 5 պայմանագիր:

Բաժինը ստացել է դիմումներ՝ 7-ը քաղաքացիներից, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվել:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական

տեսչության պետ

Մ. Մեսրոպյան